ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 205-Ա
« 29 » ՀՈՒԼԻՍԻ 2025Թ.
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 22-Ի ԹԻՎ 59-Լ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԹԻՎ 9-Ը ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության մարզերի առողջապահության համակարգերի օպտիմալացման ծրագրերը հաստատելու մասին» թիվ 1911-Ն որոշման 10-րդ հավելվածով հաստատված Վայոց ձորի մարզի առողջապահական համակարգի օպտիմալացման պլանի «Եղեգնաձորի տարածաշրջան» բաժնի 10-րդ կետը և «Վայքի տարածաշրջան» բաժնի 11-րդ կետը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2023 թվականի մարտի 22-ի « Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատելու մասին» թիվ 59-Լ որոշմամբ հաստատված թիվ 9 հավելվածի՝

«Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության կանոնադրության» մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) 16-րդ կետի «առողջապահական պետական ոչ առևտրային» բառերը փոխարինել «պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների» բառերով:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք. Եղեգնաձոր